## ՊԵՍԱՐԻԱ. ԿՈՆՔԻ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԻՋԵՑՄԱՆ ՈՉ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԲՈՒԺՄԱՆ ՄԵԹՈԴ

Արգանդի և հեշտոցի պատերի իջեցումները տարածված խնդիր են կանանց շրջանում և հանդիպում են համարյա ամեն երկրորդ կնոջ մոտ:

Կոնքի օրգանների իջեցում ունեցող 9 կանանցից միայն մեկը կարող է վիրահատական միջամտության կարիք ունենալ:
Արգանդի և հեշտոցի պատերի իջեցումներն առաջանում են կապանային համակարգի թուլացման պատճառով: Կապանային համակարգի թուլությունը կարող է առաջանալ ծննդաբերության, հղիության, ծանրություն բարձրացնելու, տարիքային փոփոխությունների, քրոնիկ փորկապության, քրոնիկ հազի, ճարպակալման հետևանքով: Որոշ դեպքերում կապանային համակարգի թուլությունը կարող է գենետիկ խնդիր լինել:

Կոնքի օրգանների իջեցումը կարող է առաջացնել դիսկոմֆորտի զգացողություն, ցավեր աճուկային շրջանում, հաճախամիզություն, անմիզապահություն, անկողապահություն, միզուղիների հաճախակի բորբոքումներ (պայմանավորված միզապարկի անլիարժեք դատարկմամբ):



## Ի՞ՆՉ Է ՊԵՍԱՐԻԱՆ

Պեսարիաները սիլիկոնե օղեր են, որոնք տեղադրվում են հեշտոցի ներսում՝ կոնքի օրգանների իջեցումը շտկելու նպատակով: Պեսարիաները լինում են տարբեր ձևի և չափի. դրանց ընտրությունը պայմանավորված է կոնքի օրգանների իջեցման աստիճանով:

Այս օղերը կնոջ առողջությանը չեն կարող վնասել: Երկարատև օգտագործումից պեսարիան կարող է փոխել գույնը, բայց դա չի նշանակում, որ կինն այլևս չի կարող այն օգտագործել: Սովորաբար նույն պեսարիան կանայք օգտագործում են 3-5 տարի:

## Ո՞Ր ԴԵՊՔԵՐՈՒՄ ԵՆ ՊԵՍԱՐԻԱՆԵՐ ՏԵՂԱԴՐՎՈՒՄ

Պեսարիաների մեծամասնությունն օգտագործվում է իջեցումը շտկելու, հաճախամիզությունը և փորկապությունը կարգավորելու, միզուղիների հաճախակի բորբոքումներից խուսափելու նպատակով: Պեսարիա կարող է տեղադրվել նաև այն դեպքերում, երբ կինը խուսափում է վիրահատական միջամտությունից կամ երբ վիրահատությունը հակացուցված է:

## ԻՆՉՊԵ՞Ս Է ՏԵՂԱԴՐՎՈՒՄ ՊԵՍԱՐԻԱՆ

Կոնքի օրգանների իջեցման ձևը և տեսակը ախտորոշվում է գինեկոլոգիական զննման ընթացքում: Յուրաքանչյուր այցելուի համար ընտրվում է իրեն համապատասխան պեսարիա: Չափը ճիշտ ընտրելու համար սկզբում դրվում է փորձնական պեսարիա: Եթե պեսարիայի չափը փոքր է, ապա միզելիս կամ աղիները դատարկելիս այն կարող է ընկնել: Եթե պեսարիան մեծ է, ապա կարող է առաջացնել ցավ կամ դիսկոմֆորտ հեշտոցում: Եթե պեսարիայի չափը ճիշտ է ընտրված, ապա կինը չի զգում դրա գոյությունը:

Պեսարիայի տեղադրումից հետո կինը քայլում է մոտ տասնհինգ րոպե, ապա միզում է և եթե չկա անհանգստության կամ ցավի զգացում, ապա այդ չափի պեսարիան տեղադրվում է մշտական օգտագործման համար:

## ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Թեթև աստիճանի իջեցումների դեպքում կարող է կոնքի օրգանների ֆիզիոթերապիա նշանակվել: Արտահայտված իջեցումների դեպքում բուժման տարբերակներ են պեսարիաների տեղադրումը կամ վիրահատական բուժումը:

## Ի՞ՆՉ Է ԼԻՆՈՒՄ ՊԵՍԱՐԻԱՅԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Պեսարիայի տեղադրումից մեկ ամիս անց կինը գալիս է կրկնակի խորհրդատվության, որի ընթացքում մասնագետը հանում է պեսարիան, զննում է հեշտոցի պատերը, կատարում է պեսարիայի լվացում և կրկին տեղադրում:

Դրանից հետո կինը պետք է յուրաքանչյուր 3-6 ամիսը մեկ այցելի մասնագետին: Կան որոշ տեսակներ, որոնք կինը կարող է ինքնուրույն հանել, լվանալ և կրկին տեղադրել:

Պեսարիաների որոշ տեսակներ պետք է զննվեն և հանվեն բժշկի կողմից:

## Ի՞ՆՉ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ

### 1. Արյունահոսություն /Էրոզիաներ

Կարող է առաջանալ արյունային բնույթի արտադրություն սեռական ուղիներից կամ կարող են ձևավորվել վերքային մակերեսներ հեշտոցում կամ արգանդի պարանոցին:
Արյունային բնույթի արտադրության դեպքում պետք է անհապաղ դիմել բուժող բժշկին: Նման դեպքերում սովորաբար պեսարիան հանվում է, բուժում է նշանակվում և խնդրի վերացումից հետո պեսարիան կրկին տեղադրվում է:

### 2. Ցավ կամ դիսկոմֆորտ

Եթե պեսարիան տեղադրելուց մեկ կամ երկու օր անց ցավ կամ դիսկոմֆորտի զգացում է առաջանում՝ նշանակում է պեսարիայի չափը սխալ է ընտրվել և պետք է դիմել մասնագետին՝ ճիշտ չափի պեսարիա տեղադրելու համար:
Եթե ցավը կամ դիսկոմֆորտի զգացողությունն առաջանում են պեսարիայի տեղադրումից տարիներ անց, ապա հնարավոր է, որ կոնքի օրգանների իջեցման աստիճանը փոխվել է, իջեցումը դարձել է ավելի թեթև աստիճանի և պեսարիան փոքրացնելու կարիք կա:

### 3. Արտադրություն սեռական ուղիներից

Պեսարիայի օգտագործման ընթացքում սպիտակավուն հեշտոցային արտադրությունը նորմալ է համարվում: Եթե արտադրությունը դառնում է դեղնավուն կամ տհաճ հոտով, ապա պետք է դիմել մասնագետի բուժման նպատակով:

## ԻՆՉՊԵ՞Ս Է ՊԵՍԱՐԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՆԴՐԱԴԱՌՆՈՒՄ ԿՆՈՋ ԿՅԱՆՔԻ ՎՐԱ

Կնոջ առօրյայում ոչինչ չի փոխվում: Ունենում է միայն դրական փոփոխություններ, իջեցումն այլևս չի անհանգստացնում: Կինը կարող է զբաղվել սպորտով կամ երկար քայլել:



Խնդիրներ չեն առաջանում նաև դաշտանային ցիկլի ընթացքում: Դաշտանային ցիկլի ընթացքում կինը կարող է հանել պեսարիան:

## ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔ ԵՎ ՊԵՍԱՐԻԱ

Կան պեսարիաների տեսակներ, որոնք կարող են պահպանվել սեռական հարաբերության ընթացքում: Եթե սեռական հարաբերության ընթացքում զուգընկերն զգում է պեսարիան, ապա կինը կարող է հարաբերությունից առաջ այն հանել, ապա կրկին տեղադրել:

Պեսարիա տեղադրելիս բժշկի հետ պետք է քննարկել սեռական կյանքին առնչվող հարցերը, որպեսզի բժիշկը կարողանա ճիշտ պեսարիա ընտրել:

## ԷՍՏՐՈԳԵՆԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱՆ ՊԵՍԱՐԻԱ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Դաշտանադադարում գտնվող կանայք կամ հեշտոցի արտահայտված չորություն ունեցող կանայք պետք է տեղային էստրոգենային քսուքներ կամ մոմիկներ օգտագործեն: Դրանց ցուցումները կամ հակացուցումները որոշվում են մասնագետի կողմից: